գրաւում ու միացնում է բոլոր ուղեւորներին: Հարեւանդ, կամ մանաւանդ հարեւանուհիդ, որ ի հարկէ աւելի աչքի է ընկնում իր հետաքրքրութեամբ, խաբեւելով քո արտասանած մի քանի ճապոներէն խօսքերից, անվերջ հարցեր է թափում գլխիդ, թէ ո՞վ ես, ո՞րտեղից եւ ի՞նչ բանի ես:

Ես մեծ ճիգ էի գործ դնում մի կերպ տակից դուրս պրծնելու. տալիս էի հիւրանոցիս անունը, արտասանում էի իրար ետեւից իմ անցած քաղաքների շարքը եւ զանազան շեշտերով կրկնում էի ճապոնացու սովորական բացականչութիւնը. «սօ՛ու-դեսկա՛, սօ՛ու-դեսկա՛» գերմաներէն եօ-ի պէս մի բան, որով, նայած արտասանութեանդ եղանակին, արտայայտւում է թէ ուրախութիւն, թէ վիշտ, թէ զարմանք, թէ հարց ու թէ ամեն բան:

Բայց իմ սխալ շեշտադրութիւնս, հարցի ու բացականչութեանս մէջ եղած յաճախ անհամաձայնութիւնը ամբողջ հասարակութեանը մեծ զւարճութիւն էր պատճառում:

Այնպէս որ հին բարեկամներ էինք արդէն, երբ ոտքի ելայ իջնելու համար. խոր ու խոր բարեւներով անջատւեցինք միմեանցից:

Ճապոնացու պարզութիւնն ու սրտաբացութիւնը մի մասնաւոր հրապոյր է տալիս նրան: Ես գոնէ մի անչափ վստահութիւն ունէի միշտ դէպի նրանք: Մի նոր քաղաք հասնելիս անփոյթ ընկնում էի փողոցները մեն-մենակ, եւ երբէք չեմ զգացած շփոթութիւն կամ երկիւղ, ինչ որ շատ յաճախ զգում է կինը եւրոպական մի նոր քաղաքում: Ես բացարձակ կերպով համոզւած էի, որ այդտեղ ինձ ոչ ոք չի վիրաւորի, այլ ընդհակառակը՝ պատահած դէպքում ամեն մի անցորդ պաշտպան կը կանգնի:

Սխալւում էի գուցէ, ինչպէս հիմա ասում է ինձ իմ